ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանակությամբ, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակությամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այնպես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կարող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիգեն Քոչարյան
"PERINCEK V. SWITZERLAND"ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՌԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ 5

Լևոն Գևորգյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ 18

Անի Սիմոնյան
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 25

Արթուր Վաղարշյան
ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 35

Տարոն Սիմոնյան
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

Ալվարդ Ալեքսանյան
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 68

Նարինե Դավթյան
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 87

Գևորգ Դանիելյան
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ 98

Վարդան Այվազյան

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄԻ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 124

Անահիտ Մանասյան
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 140

Արա Գաբուզյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ 149

Սամվել Դիլբանդյան
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 160

Аида Искоян
ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА: МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ 174

Գրիգոր Բեքմեզյան
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 190

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նարինե Դավթյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Իրավունքի տեսության մեջ կարելի է առանձնացնել իրավունքի կենսագործման տեսության երկու հիմնական տարբերակներ՝ նախ, ձևական կամ նորմատիվիստական հայեցակարգեր, որոնց հիմքում ընկած է իրավունքի նեղ, ձևական, ոչ բովանդակային հասկացությունը, իսկ այնուհետև՝ իրավահասկացության լայն վարկածների վրա կառուցված իրավունքի կենսագործման տեսության տարբերակներ, որոնք, լինելով հազվադեպ, փորձում են *իրավունքի իրականացում* հասկացությունն իմաստավորել երկու կողմից՝ իրավունքի իրավաստեղծագործության միջոցով ձևական, պաշտոնական-պետական աղբյուրներում ամրագրում-կենսագործում, այնուհետև դրական իրավունքի իրականացում-կենսագործում հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծի միջոցով:

Փիլիսոփայական տեսանկյունից մարդու գոյությունը և էությունն ունեն երեք անխզելի կողմ՝ կենսաբանական, հասարակական և իդեալական: Այսպիսի մոտեցման դեպքում մարդկային հասարակության իրավական համակարգի կայացումը սկզբնավորվում է իրավական իդեալից (ծրագիր, տեսություն), անցնելով դրականացման (պոզիտիվացում) գործընթացը՝ վերածվում է նորմատիվ-պաշտոնական ձև ունեցող իրավական պահանջների (տեքստ): Իդեալն իր իրականությունն ու պաշտոնական ամրագրումն է ստանում իրավունքի դրական ձևերում, սակայն նորմա-

տիվ ձև ունեցող անհրաժեշտության վերածված այդ իդեալը՝ որպես պիտոյ, դեռևս չիրացված հնարավորություն է: Հետևաբար, իրավական համակարգի շարժումը, գործողությունը պետք է շարունակվի իրավական նորմատիվ ձևը կյանքում կենսագործելու և դրանով իսկ իդեալն իրականություն դարձնելու համար: Շարժման այս ամբողջ շղթան իրավունքի կենսագործողությունն է, որի վերջնական նպատակը հասարակական կյանքում իրավական իդեալին կամ իրավունքի օբյեկտիվ էությանը համապատասխանող իրավակարգի հաստատումն է:

Իրավահասկացության ձևական, նորմատիվիստական, օրենքական (լեգիստական) տիպերում *իրավունքի կենսագործում* հասկացությունն ունի նեղ, սահմանափակ իմաստ և նշանակում է պաշտոնապես գոյություն ունեցող, գործող դրական իրավունքի կենսագործում հասարակական իրավական հարաբերությունների սուբյեկտների վարքագծում՝ օգտագործման պահպանման, կատարման և կիրառման միջոցով: Մինչդեռ իրավահասկացության իրավաբանական, բովանդակային (նաև խառը), իդեալիստական, մետաֆիզիկական տիպերում, բացի վերը նշված իմաստով իրավունքի կենսագործումից, առաջ է գալիս խնդիր, որը ևս ընդգրկված է իրավունքի կենսագործում հասկացության տիրույթում, այն է՝ իրավունքը՝ որպես գաղափար, ինչ-որ սկզբունք, օբյեկտիվ էություն կենսագործել իրավական (պաշտոնական) ձևերում, աղբյուրներում և հետո միայն իրավունքի սուբյեկտների իրական-կենսական իրավական վարքագծում: Իրավաբանական դրականությանը բնորոշ իրավական մտածողությունը նույնացնելով օրենքին (օրենսդրությունը) և իրավունքին, իրավունքի կենսագործումը հանգեցնում է միայն դրական ձև ունեցող իրավական դրույթների կենսագործմանը (իրականացմանը): Իրավունքի և օրենքի տարբերակման վրա կառուցված իրավամտածողությունը տարանջատելով՝ իրավունքը և օրենքն իրավական կարգավորման համակարգի առջև դնում է նոր խնդիր՝ պաշտոնականացնել, այսինքն՝ դրական օրենսդրութ-

յան ձևով արտահայտել միայն իրավունքը (դրա էությունը, սկզբունքը, գաղափարը) և դրա օբյեկտիվ պահանջները:

Այս մոտեցումների հիման վրա փորձենք *իրավունքի կենսագործում* հասկացությունը դիտարկել և վերլուծել իրավական կարգավորման կառուցակարգի, ինչպես նաև պետության գործառույթների իրականացման իրավական ձևերի համակարգերում:

Իրավական բոլոր տեսական կառույցներից իրավական կարգավորման կառուցակարգն առավել ամբողջական, մանրամասն է արտացոլում իրավական կարգավորման, իրավունքի ձևավորման, իրավունքի գործողության գործընթացը[1]: Իրավական կարգավորման կառուցակարգը բնորոշում են որպես ,իրավական միջոցների համակարգ, որի օգնությամբ իրականացվում է հասարակական հարաբերությունների կարգավորումն իրավական պետության նպատակներին ու խնդիրներին համապատասխանե[2]: Իրավական կարգավորման կառուցակարգը՝ որպես իրավական համակարգի դինամիկայի՝ գործողության տեսության առարկան ներառում է այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են իրավական ազդեցություն և ներգործություն հասկացությունները, դրանց ձևերը, իրավական կարգավորման առարկայի և սահմանների հիմնահարցերը, իրավական կարգավորման կառուցակարգի համակարգային բաղադրատարրերի, այդ կառուցակարգի փուլերի հիմնախնդիրները, իրավական կարգավորման գործընթացում կիրառվող մեթոդների, եղանակների, տիպերի ու այլ հիմնահարցեր, որոնք կազմում են նաև արդի իրավունքի տեսության ուսումնական ծրագրերի ու հա-

[1] «Իրավական կարգավորման կառուցակարգ» հասկացությունը հիմնավորել և առաջարկել է Ս.Ս. Ալեքսեևը (Ì åõàíèçì ïðàâîâîãî ðåãóëèðîâàíèÿ â ñîöèàëèñòè÷åñêîì ãîñóäàðñòâå. Ì., 1966): Նրա առաջարկած իրավական կարգավորման կառուցակարգ հասկացությունը կոչված էր արտացոլելու իրավունքի գործառութավորման ընթացքը: Ներկայումս իրավական կարգավորման կառուցակարգի տեսությունն իրավունքի տեսության կայացած մասերից է:

[2] Տե՛ս **Õðîïàíþê Â. Í**., Òåîðèÿ ãîñóäàðñòâà è ïðàâà. Ì., 1999, էջ 341-342:

մապատասխան դասագրքերի բաղկացուցիչ մասը: Թվարկված հիմնախնդիրներից մեզ հետաքրքրում է միայն իրավական կարգավորման կառուցակարգի փուլերի հիմնահարցը:

Իրավական կարգավորման կառուցակարգն իրենից ներկայացնում է իրավական կարգավորման ոչ միայն ստատիկ վիճակը՝ որպես բաղադրատարրերի ամբողջություն, այլ նաև իրավական կարգավորման դինամիկան՝ որպես կարգավորիչ գործընթաց: Իրավական կարգավորման կառուցակարգի դինամիկան վերարտադրում է օրինաչափ կապերն իրավաստեղծագործության, իրավունքի իրականացման, պետական հարկադրանքի միջև[1]: Իրավական կարգավորման կառուցակարգի գործառութային կառուցվածքի վերաբերյալ տեսական մոտեցումներից մեկի համաձայն՝ իրավական կարգավորման սոցիալական կառուցակարգը բաժանվում է հինգ առանձին բաղադրատարրեր-ենթակառուցակարգերի՝

1) իրավունքի ձևավորման կառուցակարգը.

2) իրավաստեղծագործության կառուցակարգը.

3) իրավական տեղեկութավորման կառուցակարգը.

4) իրավունքի իրականացման (օգտագործում, պահպանում, կատարում, կիրառում) կառուցակարգը.

5) իրավական վերահսկողության կառուցակարգը[2]:

Իրավական կարգավորման կառուցակարգի՝ որպես իրավունքի տեսության մասի հիմնահարցերի ընդհանուր նկարագրությունից երևում է, որ այդ տեսությունը բավականին լայն, խորը և մանրամասնորեն է արտացոլում իրավական կարգավորման ողջ գործընթացը: Իրավունքի կենսագործման արդի տեսության և իրավական կարգավորման կառուցակարգի տեսության համեմատական վերլուծությունը հաստատում է, որ առաջինը կարծես թե հետ է մնացել, որովհետև մեծամասամբ իրավունքի տեսաբանները կենտ-

[1] Տե՛ս Ñîöèîëîãèÿ ïðàâà. Ïîä ðåä. Â.Ì. Ñûðûõ. Ì., Þðèäè÷åñêèé Äîì „Þñòèöèíôîðì“, 2001, էջ 98:

[2] Տե՛ս նշվ. աշխ., էջ 98:

րոնացել են դրական իրավունքի (օրենսդրության) կենսագործման հիմնահարցերի վրա: Մինչդեռ հիմա արդեն իրավական կարգավորման կառուցակարգի տեսության մեջ չկա որևէ հեղինակ, որն իրավական կարգավորման կառուցակարգը կպատկերացներ միայն որպես արդեն սահմանված օրենսդրության դրույթների կենսագործում հասարակական հարաբերություններում՝ սուբյեկտիվ իրավունքների օգտագործման կամ պարտականությունների կատարման միջոցով: Երկու տեսությունների միջև առկա այդ անհամամասնությունն անհրաժեշտ է հաղթահարել՝ մշակելով իրավական կարգավորման ողջ գործընթացն արտացոլող իրավունքի կենսագործման տեսության նոր մոտեցումները և հիմունքները՝ համապատասխանեցնելով այն իրավական կարգավորման կառուցակարգի տեսությանը կամ դրանից բխող հայեցակարգային պահանջներին, հատկապես որ այս տեսությունն իրավունքի տեսության շրջանակներում ավելի լայն, ամբողջական վերացարկված մոտեցում է, քան իրավունքի կենսագործման (իրականացման) տեսությունը:

Եթե իրավական կարգավորման կառուցակարգի գործողությունն սկսվում է իրավունքի ձևավորումից (իրավակազմավորումից) և անցնում է իրավաստեղծագործության փուլին, իսկ այնուհետև պոզիտիվ իրավունքի կենսագործման ձևերին, ուրեմն *իրավունքի կենսագործում* հասկացությունը անպայմանորեն պետք է իրենում ներառի, իմաստավորի այդ գործընթացը: Իրավունքի կենսագործումը ևս անցնում է համապատասխան կառուցակարգով, որը սկսվում է իրավունքի ձևավորումից, անցնում իրավաստեղծագործության գործընթացով, այնուհետև փոխանցվում իրավական կարգավորման կառուցակարգի հաջորդ փուլերին: Իրավական կարգավորման և իրավունքի կենսագործման (իրականացման) կառուցակարգի բոլոր փուլերի գործողության իրական արդյունքն իրավակարգն է՝ արդեն կարգավորված հասարակական հարաբերությունները:

Իրավունքի կենսագործում հասկացության քննարկումն իրավական կարգավորման կառուցակարգի փուլային համակարգում հնարավորություն է տալիս առաջ քաշելու և հիմնավորելու *իրավունքի կենսագործման կառուցակարգ* հասկացությունը: Իրավունքի կենսագործման նման լայն հասկացության հիմնավորման լրացուցիչ միջոց կարել է համարել արդի պետության գործառույթների իրականացման իրավական ձևերի տեսության հիմնադրույթներին դիմելը:

Պետությանը պատկանող իշխանության իրականացումը դրսևորվում է որոշակի ձևերով, հատկապես իրավական: Պետական իշխանության իրականացման իրավական ձևը պետության մարմինների միասեռ գործունեությունն է, որի միջոցով պետությունն իրականացնում է իր գործառույթները[1]: Պետական իշխանության իրականացման իրավական ձևն ընթանում է իրավաբանորեն նշանակալի գործողությունների կատարմամբ և հանգեցնում է իրավական հետևանքների: Ընդունված և հանրաճանաչ մոտեցման համաձայն՝ պետական իշխանության իրականացման իրավական ձևերում դրսևորվում է պետական ապարատի և իրավունքի կապը, ինչպես նաև պետական ապարատի պարտավորությունը՝ իր իշխանությունը և լիազորություններն իրականացնել իրավունքին համապատասխան, օրենքի շրջանակներում:

Ամենատարածված տեսակետի համաձայն՝ պետության գործունեության տեսակներ են համարվում իրավաստեղծագործությունը, իրավակիրառումը, իրավապահպանությունը[2]: Մ. Ի. Բայտի-

[1] «Պետական իշխանության իրականացման իրավական ձևեր» կամ «պետական իշխանության գործառույթների իրականացման իրավական ձևեր» հասկացությունները մշակվել են «պետության գործառույթների» տեսության մեջ:

[2] Տե՛ս **Головистикова А.Н., Дмитриев Ю.А.,** Проблемы теории государства и права: М., 2005, էջ 181-182: Ա.Վ. Մալկոն ևս պետության գործառույթների իրականացման ձևեր է համարում իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեությունը (տե՛ս Ìàëüêî À.Â. «Ýêçàìåí ïî òåîðèè ãîñóäàðñòâà è ïðàâà». - Ì ïñêâà, 1996, էջ 36):

նը պետական իշխանության իրականացման ձևերը բաժանում է իրավական և կազմակերպական ձևերի: Իրավական ձևերն իրենց հերթին բաժանվում են իրավաստեղծ գործունեության (նորմատիվ ակտերի հրատարակում, իրավական նորմերի սահմանում կամ սանկցիավորում, փոփոխում կամ վերացում), իրավակիրառ գործունեության, որն ուղղված է օրենքների և ենթաօրենսդրական ակտերի կատարմանն իրավունքի կիրառման ակտերի հրապարակման ճանապարհով:[1] Ներկայումս տեսաբաններն առանձնացնում են պետական իշխանության իրականացման իրավական ձևերի ավելի շատ տեսակներ[2], ավանդական տեսակներին ավելացնելով նաև մեկնաբանողական-իրավական և հսկիչ-վերահսկողական ձևերը:

Պետական ապարատի իրավաստեղծ գործունեության արդյունքում ընդունվում և հրապարակվում են հասարակական որոշակի հարաբերություններ կարգավորող իրավունքի նորմատիվ ձևեր: Իրավակիրառ ձևը դրսևորվում է պետական մարմինների կողմից իրավական նորմերի կատարման և կիրառման, իսկ իրավապահպան ձևը՝ իրավակարգի, անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը նպատակաուղղված իրավակիրառ գործունեության մեջ:

[1] Իրավակիրառ գործունեությունը Մ. Ի. Բայտինը բաժանում է **օպերատիվ-գործադիր** գործունեության (ամենօրյա գործադիր-կարգադրիչ գործունեություն իրավունքի կիրառման ակտերի ընդունման ճանապարհով), **իրավապահպան գործունեություն**՝ օպերատիվ աշխատանքն ուղղված իրավունքի նորմերը խախտումներից պաշտպանելուն, իրավունքի սուբյեկտներին տրված իրավունքների պաշտպանությունը, նրանց վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանը (տե՛ս Теория государства и права. Курс лекции / Под ред. Н.И. Матузова и А.Б. Малко, էջ 74-77):

[2] **Վաղարշյան Ա.** Պետության և իրավունքի տեսություն: Ներածություն, Պետություն. առաջացումը, հասկացությունը, էությունը, գործառույթները, ձևերը: Դասախոսություններ, Եր., 2009, էջ 104-107:

Մեկնաբանողական իրավական գործունեությունն իրավասու հանրային մարմինների, պաշտոնատար անձանց գործունեությունն է՝ ուղղված իրավունքի նորմերի պաշտոնական մեկնաբանմանը, որն ավարտվում է մեկնաբանող ակտի ընդունմամբ[1]: Հսկիչ-վերահսկիչ իրավական գործունեությունը հանգում է իրավական նորմերի կենսագործման օրինականության ստուգմանը՝ համապատասխան իրավական ձևերով:

Հանրային իշխանության իրավական գործունեությունը սկսվում է իրավաստեղծագործությունից, այնուհետև նրանք իրականացնում են իրավակիրառում, իրավապահպանություն, ինչպես նաև մեկնաբանողական և հսկիչ-վերահսկողական գործունեություն: Այս ձևերը, ցուցադրելով իշխանության և իրավունքի կապը, հուշում են, որ պետության իրավական գործունեությունը չի կարող սահմանափակվել միայն դրական ձև ունեցող նորմերի կենսագործմամբ, որ մինչ այդ պետությունը ստեղծում է իրավունքը, իրավունքի օբյեկտիվ պահանջները վերածում է դրական բնույթ ունեցող իրավանորմերի, այսինքն՝ կենսագործում է իրավունքն իրավական ձևերում՝ սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական ակտերի մեջ:

Այսպիսով՝ *իրավունքի կենսագործում* հասկացության և՛ իրավական կարգավորման կառուցակարգում, և՛ պետական իշխանության իրականացման ձևերի համատեքստում վերլուծությունը հաստատում է լայն իմաստով իրավունքի կենսագործում հասկացության իրական հիմքերը և գոյության իրավունքը:

Իրավունքի և օրենքի տարբերակման հայեցակարգի տեսանկյունից *իրավունքի կենսագործում* հասկացությունը ձեռք է բերում նոր բովանդակություն, ինչպես նաև ի հայտ են գալիս իրավունքի իրականացման նոր ձևեր: Իրավական բոլոր տեսակի տեսական կառույցներից իրավական կարգավորման կառուցակարգն առավել

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 104-107:

ամբողջական, մանրամասն է արտացոլում իրավական կարգավորման, իրավունքի ձևավորման, իրավունքի գործողության ընթացքը: *Իրավունքի կենսագործում* հասկացության քննարկումն իրավական կարգավորման կառուցակարգի փուլային համակարգում հնարավորություն է տալիս առաջ քաշելու և հիմնավորելու իրավունքի կենսագործման կառուցակարգ հասկացությունը: Այդպիսի մոտեցումը հաստատում է նաև իրավունքի կենսագործումն արդի պետության գործառույթների իրականացման իրավական ձևերի համատեքստում դիտարկելը: Արդյունքում տեսական հնարավորություն է առաջանում հիմնավորելու նոր իրավական հասկացություն, այն է՝ *իրավունքի կենսագործման իրավաբանական կառուցակարգ*, որի բաղադրատարրերն են իրավունքի (էության) վերածումը դրական իրավունքի (ձևի) և դրական իրավունքի կենսագործումը (իրականացումը) հասարակական հարաբերություններում:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПОНЯТИЯ РЕАЛИЗАЦИИ ПРАВА В КОНТЕКСТЕ СИСТЕМЫ СТАДИИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ И ФОРМ ОСУЩЕСТВЛЕНИЯ ФУНКЦИИ ГОСУДАРСТВА

Нарине Давтян

Ассистент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

При рассмотрении понятия “реализация права” с точки зрения концепции различения права и закона, оно приобретает новый смысл, а также становится возможным предложить новые виды осуществления права. Из всех теоретических правовых конструкций поэтапная структура правового регулирования наиболее полно отображает процессы регулирования, формирования и реализации права.

Изучение понятия реализации права в плоскости постадийной системы правового регулирования позволяет выдвинуть и обосновать новое теоретическое правовое понятие — „юридический механизм реализации права“, составными элементами которого являются преобразование права (сути, или принципа, или идеи) в позитивное право (форму) и реализация позитивного права в общественных отношениях. Подобный подход подтверждается также при рассмотрении понятия „реализациия права“ с точки зрения правовых форм осуществления функций современного государства.

THE PROBLEMS OF THE CONCEPT OF "LAW IMPLEMENTATION" IN THE CONTEXT OF LEGAL REGULATION PHASE SYSTEM AND REALIZATION FORM OF STATE FUNCTIONS.

Narine Davtyan
Assisting professor at the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

From the point of view of right and law differentiation conception, the "Law implementation" notion acquires new contents, as well as law implementation new forms come to light. Among the all kind of legal theoretical institutions, the legal regulation structure is much more complete, minutely reflects the process of legal regulation, law formation, law activity. The discussion of "Law implementation" notion in phase system of legal regulation structure, gives an opportunity to bring forward and justify the notion of "Law implementation structure". Such approach also certifies the observation of law implementation in context of legal forms of realization of contemporary state functions. As a result, theoretical chance occurs to justify new legal notion, i.e. "law implementation legal structure", the components of which are the transformation of law (essence) into a positive law (form) and implementation of positive law (fulfillment) in public relations.

Բանալի բառեր՝ *իրավունքի կենսագործում, իրավական կարգավորման կառուցակարգ, իրավական կարգավորման փուլ, պետության գործառույթների իրավական ձևեր, իրավունքի կենսագործման կառուցակարգ:*
Ключевые слова: *реализация права, механизм правового регулирования, стадия правового регулирования, правовые формы осуществления функций государства, механизм реализации права.*
Key words: *Law implementation, mechanism of legal regulation, phase of legal regulation, legal forms of state functions, mechanizm of law implementation.*

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Գևորգ Դանիելյան
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
«Սահմանադրական իրավունքի կենտրոն» Հ/Կ խորհրդի նախագահ,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սույն հետազոտության շարժառիթը, այսպես կոչված, *հանրային նշանակության գործունեություն* իրականացնող, հատկապես՝ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում ֆիզիկական և իրավաբանական անձանց սահմանադրական իրավունքների ողջամիտ պաշտպանության համակարգի ձևավորման արդիական խնդիրն է: Ներկայումս գիտագործնական շրջաններում հաճախ է խոսվում այն մասին, որ հիշյալ կազմակերպությունների կորպորատիվ կառավարման համակարգը, որին հանգամանորեն և գիտական անհրաժեշտ մակարդակով անդրադարձել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական իրավագետները[1], երբեմն առանձնանում է այնպիսի ցայտուն բյուրոկրատական բաղադրիչներով, որպիսիք չեն հանդիպում անգամ պետական ապարատում:

Բնակաբար, այսպիսի իրավիճակը չէր կարող չանդրադառնալ քաղաքացիների իրավունքների ու պաշտպանության արդյունավետության վրա: Գիտագործնական շրջանակներում, որպես կանոն, առավել արդիական է համարվում պետական մարմինների համա-

[1] Այս թեմայով նույնիսկ պաշտպանվել է դոկտորական ատենախոսություն, որի հեղինակն է հայ իրավագետ Վ.Ավետիսյանը: Առավել հանգամանորեն այդ հարցադրումներին կարելի է ծանոթանալ վերջինիս հետևյալ մենագրությունում՝ Վ.Դ. Ավետիսյան, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով) - Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2013 – 400 էջ: